

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 1740-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

22 սեպտեմբերի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 սեպտեմբերի 2005 թվականի N 1489-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
31-Ի N 1740-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի «Ուստիկյանությունում ծառայողի զինվորական հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1740-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2005 թ. սեպտեմբերի 7 Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2005 թվականի

սեպտեմբերի 1-ի N 1489-Ն որոշման

Հավելված

ՀՀ կառավարության 2002 թվականի

հոկտեմբերի 31-ի N 1740-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է ոստիկանության ծառայողին՝ զինված ուժերի հաշվառումից հանելու և ոստիկանությունում զինվորական հաշվառման վերցնելու կարգը:
2. Ոստիկանությունում ծառայության անցած ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին ու կրտսեր խմբերի պաշտոններում նշանակված և պետական պատվերի ու միջազգային համաձայնագրերի շրջանակներում սովորելու համար ոստիկանության ուսումնական հաստատություն ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հանվում են զինված ուժերի զինվորական հաշվառումից և վերցվում զինվորական հաշվառման ոստիկանությունում:
3. Ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններում նշանակված կամ սովորելու համար ոստիկանության ուսումնական հաստատություն ընդունված ոստիկանության ծառայողին զինված ուժերի զինվորական հաշվառումից հանելու և ոստիկանությունում զինվորական հաշվառման վերցնելու համար հիմք է հանդիսանում պաշտոնի նշանակելու կամ որպես սովորող հրամանագրելու մասին հրամանը:
4. Ոստիկանության համապատասխան կադրային ծառայությունը քաղաքացուն ոստիկանությունում պաշտոնի նշանակելու, սովորելու համար ոստիկանության ուսումնական հաստատություն ընդունվելու մասին հրամանի արձակման օրվանից 7-օրյա ժամկետում ծառայողի զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ է ներկայացնում միջնորդություն՝ նրան զինված ուժերի զինվորական հաշվառումից հանելու և ոստիկանությունում զինվորական հաշվառման վերցնելու համար:

Միջնորդությամբ ներկայացվում են՝

ա) ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու կամ որպես սովորող հրամանագրվելու մասին հրամանի քաղվածք,

բ) անվանական ցուցակ (ձև N 1),

զ) զինվորական գրքույկ,

դ) ոստիկանության ուսումնական հաստատությունում սովորողի համար՝ զինվորական գրքույկ կամ զորակոչային կցագրման վկայական:

5. Զինվորական կոմիսարիատն անվանական ցուցակների հիմնավորվածությունը ճշտելուց հետո զինվորական հաշվառման փաստաթղթերում կատարում է համապատասխան նշումներ զինված ուժերի հաշվառումից հանելու մասին: Հաշվառման քարտը պահպանվում է զինվորական կոմիսարիատում՝ հատուկ հաշվառման վերցված զինապարտների քարտադարանում, զինվորական գրքույկը կամ զորակոչային կցագրման վկայականը, իսկ պահեստագործի սպաների համար՝ զինվորական կրճատված անձնական գործը փոխանցվում են ոստիկանության համապատասխան կադրային ծառայություն, որտեղ այն պահվում է ծառայողի անձնական գործում՝ ոստիկանությունում ծառայության ամբողջ ընթացքում:

6. Ոստիկանությունում ծառայությունից և ոստիկանության ուսումնական հաստատությունից ազատված անձի զինվորական գրքույկը կամ զորակոչային կցագրման վկայականը, զինվորական կրճատված անձնական գործը (առկայության դեպքում) զինված ուժերում զինվորական հաշվառման վերցնելու համար ազատման հրամանի արձակման օրվանից հետո 7-օրյա ժամկետում կադրային ծառայության կողմից համապատասխան տեղեկանքի հետ միասին (ձև N 2) ուղարկվում են այն զինվորական կոմիսարիատ, որտեղից ծառայողը հանվել է հաշվառումից: Ծառայության ընթացքում ծառայողի բնակության վայրը փոխվելու դեպքում նշված նյութերն ուղարկվում են նրա բնակության վայրի զինվորական կոմիսարիատ»:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

_____ (նյութի համարը)

_____ (n°-ը է ուղարկվում)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՀՀ ռստիկանությունում ծառայությունից ազատված
զինապարտի մասին**

Տրվում է այն մասին, որ _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

ազատման պահին ունեցել է _____ կոչում.

որը շնորհվել է _____ 20 թ. N _____ հրամանով:

Ծնված՝ 19 _____ թ., հաշվառման մեջ է գտնվել ՀՀ ռստիկանության համակարգում

_____ թ-ից N _____ հրաման մինչև _____ 20 _____ թ.:

Ազատված է _____ 20 թ. N _____ հրամանով:

Բնակության վայրը _____

Առդիր _____
(զինվորական գրքույկը, զինվորական կրճատված անձնական գրքը, գորակոչային կցագրման վկայականը)
(անհրաժեշտը նշել)

Ստորաբաժանման ղեկավար

_____ (սպաշտոնը)

_____ (կոչումը)

_____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Կ. Տ.

_____ 200 թ.